
**ԼԵԶՎԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՅԱՆԻ
«ԽԱՆԳԱՐՄՈՒՆՔ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ...» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Հոդվածի նպատակն է ներկայացնել հայերենի լեզվական խաթարումների պատկերը ըստ Գ. Այվազյանի «Խանգարմունք հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումն» աշխատության¹:

Լեզուն անընդհատ զարգացող կենդանի օրգանիզմ է, ուստի ցանկացած լեզվի տվյալ՝ համաժամանակյա փուլում անխուսափելի է հաճախ անհարկի նորաբանությունների, ինչպես նաև արդեն լեզվական գործառույթներից դուրս եկած հնաբանությունների կիրառումը: Լեզվի զարգացումը ճիշտ ուղու վրա դնելու և լեզվական անհարկի կիրարկումները ժամանակին կանխելու նպատակով չափազանց կարևոր է գտնել և հանրության ուշադրությունը հրավիրել լեզվական խոտորումներին: Գ. Այվազյանի վերը նշված աշխատությունը հենց այդպիսի մի փորձ է՝ վեր հանելու լեզվական անհարկի կիրարկումները և առաջարկելու ավելի հայեցի բառային տարբերակներ:

19-րդ դ. աշխարհաբարը հաճախ զարգանում էր ոչ բնականոն ուղիով, այսինքն՝ իրեն էր ձուլում տարբեր բնակավայրերի խոսվածքները, ինչպես նաև անհարկի փոխառություններ կատարում դրանցից: Արտալեզվական գործոնները հաճախ դանդաղեցնում էին լեզվի զարգացման կանոնավոր ուղին, և հարկ էր լինում ժամանակ առ ժամանակ անդրադառնալ լեզվի անաղարտության հարցին: Այդպիսի մի ներքին մղումով էլ ստեղծվեց Գ. Այվազյանի այս աշխատությունը: Լեզվական խաթարումները, պետք է նշել, որ հիմնականում վերաբերում են 19-րդ դ. դրիմահայերի լեզվում նկատվող օտարաբանություններին:

¹ Տե՛ս Գ. Այվազյան, Խանգարմունք հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումն, Թեոդոսիա, 1869 (այսուհետև այս աշխատությունից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում փակագծերում նշելով էջերը): Գ. Այվազյանը (Գաբրիել Այվազովսկի, աշխարհառջակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը) եղել է հայ նշանավոր եկեղեցական և հասարակական գործիչ, պատմաբան, բանասեր, լեզվաբան և թարգմանիչ: Պատմական, կրոնաբարոյական և թարգմանական բնույթի բազմաթիվ աշխատությունների գուգահեռ՝ գրել է նաև բանասիրական, մասնավորապես՝ լեզվագիտական ուղղվածությամբ զգալի թվով աշխատություններ, որոնցից մեկի քննությունը ներկա հոդվածի խնդրո առարկան է: Գ. Այվազյանի կյանքի, գործունեության և աշխատությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Զ. Իրիցյան, Գաբրիել Այվազյանը (Այվազովսկի) Մխիթարյան միաբանության անդամ, «Վենետիկի Մխիթարյան միաբանություն – 300», Միջազգային գիտաժողով, Ջեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., 2018, էջ 383-409:

Գ. Այվազյանի այս աշխատությունը, որ գրված է ժամանակի գրաբարով², շատ կարևոր էր լեզվի զարգացման բնականոն ուղին մատնանշելու համար (գրաբար>աշխարհագրագրական լեզու), թեև որոշ տեղերում հեղինակն ինքը նախապատվությունը տալիս է ոչ գրական (հիմնականում բարբառային) ձևերին, իսկ գրաբարյան կամ աշխարհագրագրական կառույցներից շարադրանքում կիրառում գրաբարյան տարբերակները:

Աշխատության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ Գ. Այվազյանը 19-րդ դ. լեզվական շեղումները քննելուց գատնելով ընդլայնում է լեզվական խաթարումների ժամանակային սահմանները՝ սկսելով ոսկեդարից. «Մին յադետալի անցիցն ընդ հայկազեանս մատենագրութիւն ընդ ժամանակս ժամանակս է խանգարումն եւ այլանդակել լեզուիս մերոյ, որ սովորաբար անուանի **գրոց բարբառ** (ընդգծ. - Գ. Ա.), ի շարագրածս եւ ի թարգմանութիւնս եղեալս նախ ի ձեռն հելլենախօս թարգմանչաց ոմանց ի հինգերորդի դարուն ...» (էջ 5):

Հեղինակն աշխատության առաջաբանում, ինչպես նշեցինք, լեզվի «խանգարման»՝ զարտուղության արմատները հասցնում է մինչև հինգերորդ դար՝ լեզվի խաթարման հիմնական պատճառները համարելով նախ հինգերորդ դարում թարգմանական գրականության միջոցով անցած լեզվական շեղումները՝ արված «հելլենախօս» թարգմանիչների միջոցով, երկրորդ՝ 17-րդ դ. լատինաբան հայերենի առկայությունը³, երրորդ՝ ռուսահայերի («բնակելոց երբեմն ի սահմանս պետութեան Ռուսաց») միջոցով անցած ռուսաբանությունների սովոր մասը: Գ. Այվազյանը ցավով և ափսոսանքով է նշում մեր լեզվի այդօրինակ զարգացումը՝ «սովոր է արտասուս ցաւոց ցնդեցուցանել ի հայրենասէր սրտից, ոչ ինչ ընդհատ ի նոցանէ ողբոց եւ աւաղանաց է արժանաւոր եւ այս տեսարան փլատակաց հոյակապ բարբառոյս մերոյ՝ այնպէս գեղեցիկս բարգաւաճելոյ ի ձեռս թարգմանչացն մերոց առաջնոց եւ միջնոց, եւ որոց զհետ նոցա կացին հետեւողաց յստակաբանութեան նոցին» (էջ 5): Հեղինակը լեզվի զարտուղության սկիզբ է համարում թարգմանական գրականության միջոցով անցած անհարկի փոխադրությունները՝ շեշտը դնելով մասնավորապես «հելլենախօս» մատենագ-

² Նշված ժամանակաշրջանում գործածվող գրաբարի համակողմանի քննությունը տե՛ս **Վ. Համբարձումյան**, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Եր., 1990: Աշխատության մեջ տեղեկատվական հարուստ նյութի հիման վրա քննվում են գրաբարի պահպանման և զարգացման արտաքին հանգամանքները՝ ըստ մի քանի շրջափուլերի, փաստական բովանդակալից հղումներով ներկայացվում են գրաբարի բառապաշարի և քերականական կառուցվածքի հիմնական փոփոխությունները:

³ Առավել մանրամասն տե՛ս **Վ. Համբարձումյան**, Լատինաբան հայերենի պատմություն, Եր., 2010: Փոխառությունների և լատինաբան հայերենի վերաբերյալ ուշագրավ նկատառումներ ունի նաև **Հր. Աճառյանը** (տե՛ս Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951 (ԻՇ գլուխ. «Եվրոպական փոխառությունները հայերենում և լատինաբան հայերեն»), էջ 296-323, այստեղ հեղինակն անդրադառնում է նաև Մխիթարյանների գործադրած ջանքերին՝ լատինաբան հայերենից աստիճանաբար ձերբագատվելու ուղղությամբ:

րության թարգմանությունների վրա՝ «... մերոյ ժամանակիս բանասերք ոմանք եւ բանաքաղք՝ ի թարգմանել իւրեանց յերոպական լեզուաց, մանաւանդ ի գաղղիականէն, յաշխարհիկն մեր բարբառ՝ զվիպասանութիւնս եւ զհատուկտիր մատենիկս կամ զհատուածս լրագրաց, ա՛յնքան այլանդակէն զշարագրածսն, իբրու զերոպականացս նրբութիւնս ի մերն փոխաբերել կամելով, զի ոչ միայն դժուարիմաց եւ մթին գործեն զթարգմանութիւնսն, այլ եւ զգուելի հայ ականջաց»⁴: Որպէս օրինակներ նշվում են **Փիլոն Եբրայեցու, Դիոնիսիոս Թրակացու, Արիստոտելի** և **Պլատոնի** երկերի թարգմանությունները, որտեղ Գ. Այվազյանը մի քանի բառերի օրինակով ցույց է տալիս զարտուղությունները. «Բայց մու (= մի) զշատից» (էջ 8), «զբազումս միոջէ ստորասել կամ ապուսել (= հաստատել կամ ժխտել)» (էջ 8), «իսկ հակասութեան մոյր (= միոյ) է մասն» (էջ 8), «եւ զայլոցն ներհակացս սահման բացասայց (= ի սոցանէ, յայսցանէ) մակաբերել» (էջ 8) և այլն:

Լեզվական շեղումների հաջորդ փուլը Գ. Այվազյանը պայմանավորում է լատիներենից արված թարգմանություններով, մասնավորապէս անհարկի փոխադրություններով կամ ըստ նրա՝ բառերի արհեստածին տարբերակներով. որպէս օրինակներ բերում է **Ոսկան Երևանցու, Հակոբ (Հովհաննէս) Հոյովի, Պետրոս Թիֆլիսեցու, Խաչատուր Կարնեցու, նաև Մխիթար Սեբաստացու** թարգմանությունը. Ոսկան Երևանցու տպագրած «Աստուածաշնչի»⁵ նախադրություններից հատվածներ (էջ 747). «Եղբայր Ամբրոսիոս, զքոյայինս ընծայիկս ինձ ընձեռեալ առբերեաց, համայն եւ զտրակս համեղագոյնս (= զփոքրիկ ընծայոյ քո բերեալ մատոյց ինձ, ընդ նմին եւ զնամակդ քաղցրագոյն)» (էջ 10), «Իւրաքանչիւր բանք նայնմ (յայնմ) լիք են զգացմամբ» (էջ 10), «Նախորդ վկայութիւնն է ներ Ովսեում, երկրորդն՝ նԵսայում (= առաջին վկայութիւնն յՈվսեայ մարգարէութեանն է, երկրորդն՝ յԵսայեայն)» (էջ 10):

Հաճախ բուն լեզվական շեղումներին զուգահեռ՝ Գ. Այվազյանը որոշ բառային տարբերակներ նույնպէս դասում է շեղումների շարքին, մինչդեռ վերջիններս շեղումներ չեն և ցայսօր գործածվում են հայերենի բառապաշարում որպէս ժամանակակից հայերենի բառապաշարի լիարժեք և կանոնավոր միավորներ: Այսպէս՝ վերոնշյալ օրինակում **նախորդ** բառի փոխաբեն հեղինակն առաջարկում է **առաջին** բառը, սակայն միշտ չէ, որ **նախորդ**-ը իմաստային արժեքով համընկնում է **առաջին**-ի հետ:

Գ. Այվազյանը ժամանակի թելադրանքով է բացատրում հունարենի և լատիներենի այդչափ ազդեցությունը հայերենի վրա և ըստ այդմ՝ թարգմանական գրականության մեջ բազմաթիվ արհեստական բառային տարբերակների շրջանառությամբ, ինչից, ըստ նրա, զերծ չի մնացել անգամ Մխիթար Սեբաստացին:

⁴ Նույն տեղում, էջ 6:

⁵ Աստուածաշունչ, տպագրությունը Ոսկան Երևանցու, Ամստերդամ, 1666-1668:

Այնուամենայնիվ, նա միանգամայն բարձր է գնահատում Սեբաստացու բառարանը⁶, Միքայել Չամչյանի «Քերականությունը»⁷ և այլ գործեր⁸: Այս քերականները, ըստ հեղինակի, կարողացան մաքրել և հստակեցնել հայերենը՝ ավելի մոտենալով մեր ոսկեդարին հայերենին. «...գամենայն ջան ի գործ արկին վերածել հանել զհայկազեանս բարբառ ի նախնին իւր եւ ի բնիկն յստակութիւն՝ զերծ յամենայն խառնուածոյ օտարոտի եւ անհարազատ բառից եւ դարձուածոց, օրինակս շարագրածից իւրեանց ունելով զընտիր ընտիր մատենագրութիւնս առաջնոցն՝ զգանձեալս ի գրչագիր երկասիրութիւնս նախնեաց» (էջ 14):

Այս ամենին զուգահեռ՝ հեղինակը Միխիթարյանների կիրառած «հայկաբանություն»-ը այնքան էլ կոկիկ, հստակ և հղկված չի համարում՝ համեմատելով 5-րդ դ. մատենագրությամբ ավանդված հայերենի հետ: Այնուամենայնիվ, թվարկած հեղինակների գործերի այդօրինակ ուղղվածությունը միանգամայն գովելի է համարում, իսկ ոսկեդարի լեզվին մոտենալու նրանց ձգտումը՝ լեզվի անաղարտությունը պահելու կարևոր նախապայման: Ըստ հեղինակի, սակայն, մի քանի գործոնների պատճառով աստիճանաբար խաթարվում է լեզվի այդօրինակ «առաջընթաց»-ը:

Առաջին վնասակար գործոնը Գ. Այվազյանը համարում է եվրոպական բազմաթիվ լեզուների ազդեցությունը Միխիթարյան հայրերի թարգմանությունների լեզվի վրա, երբ վերջիններս խոսքն ավելի ճոխ և ներկայանալի դարձնելու նպատակով հաճախ են նախապատվությունը տվել օտարաբանություններին կամ ոչ հայերեն տարբերակներին, որի հետևանքով թարգմանությունները վերածվել են երկարաշունչ և «անյստակ» շարադրանքի: Միխիթարյան հայրերի՝ «հայկազեան» լեզվից հեռանալու երկրորդ խափանարար գործոնը հեղինակը համարում է գրավոր խոսքում չմշակված աշխարհաբարին տուրք տալը: Հեղինակը միաժամանակ նշում է, որ հարկ եղած դեպքում այն պետք է անպայման կիրառել խոսքում, ճիշտ է՝ դեռևս որպես «լեզու անկարգ եւ անկանոն, սզեղ, սոժոյն եւ սձեւ», սակայն հեռու չէ նաև այն ժամանակը, երբ «աշխարհիկ» լեզվի մշակված տարբերակով հնարավոր կլինի ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում արտահայտել ցանկացած միտք՝ «ըստ այնմ մատենագրել զգրեան»⁹:

⁶ Տե՛ս **Մի. Սեբաստացի**, Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1749 և հ. 2, Վենետիկ, 1769:

⁷ Տե՛ս **Մ. Չամչեանց**, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779:

⁸ Առանձնացնում է նաև Մի. Սեբաստացու աշակերտներ Մատթեոս Եվդոկիացուն՝ «Պատմութիւն վարուց Լուսաւորչին» աշխատությամբ («Վարք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», Վենետիկ, 1749) և Վրթանես Ասկերյանին՝ բարձր գնահատելով վերջինիս «յստակախօս» թարգմանությունները:

⁹ Գ. Այվազյանն իր գործունեության գրեթե ամբողջ ընթացքում (սկզբնական շրջանի մի քանի գործ գրել է գրաբարով, ինչի պատճառով էլ բազմիցս համարվել է «հետադիմական հերձվածող» և գրաբարին տուրք տվող հեղինակ) զբաղվել է նաև աշխարհաբարի մշակմամբ. «Բազմավեպ»-ի հիմնադրումով և խմբագրումով, նաև աշխար-

Գ. Այվազյանը համառոտ ակնարկներ ունի նաև տարբեր վայրերում հայերենի զարգացման ուղիների վերաբերյալ: Նա փաստում է, որ, օրինակ, տաճկահայերը հնարավորինս վաղ հստակեցրին իրենց լեզուն առանց հայ քերականության «քաջահմուտ» մասնագետների, և մի քանիսը, ինչպիսին էին Գ. Փեշումալձյանը, Հ. Վանանդեցին, Մ. Սալլանթյանը և այլք¹⁰, այդ ժամանակաշրջանում գրեթե ինքնուսույց հայերենագետներ եղան, ուստի հետագայում պետք է ներողամիտ լինել նրանց գործերում առկա բացթողումների նկատմամբ: Ռուսահայերի դեպքում հայերենի զարգացման ուղին ավելի խնդրահարույց եղավ, քանի որ, ըստ հեղինակի, այն մի տեսակ լեզվական խառնուրդ դարձավ գրաբարյան որոշ տարրերի, լատիներենի և ռուսերենից կատարված խրթին թարգմանությունների պատճառով. «...եւ եղև հայկաբանութիւն ոմանց ի նոցանէ խառնուրդ իմն յաւերակաց նախնեացն բարբառոյ, եւ ի մնացորդաց աղաւաղ լեզուին լատինահայոց, եւս եւ յանպէտ եւ յանարուեստ թարգմանութեանց ռուսական բարդութեանց եւ դարձուածոց» (էջ 17): Գ. Այվազյանը նշում է, որ այդ խրթնաբան հայերենը դարձավ ոչ միայն թարգմանությունների ու հայերենով ստեղծվող գրականության լեզուն, այլև աստիճանաբար մուտք գործեց գիտական և պաշտոնական՝ «ատենական» ոճ, և ժամանակի պաշտոնական գրագրությունները՝ հրովարտակաները և եկեղեցական գրությունները, սկսեցին գրվել ուռճացված ու աղճատված հայերենով:

Գ. Այվազյանի կարծիքով՝ անհրաժեշտ էր անհապաղ միջոցներ ձեռնարկել այն հստակեցնելու և պարզելու ուղղությամբ¹¹: Նախ չափազանց գերազնահատվում է աշխարհիկ լեզվի դերը, և «ռամկական բարբառը» որպես չմշակված և գրավոր խոսքին անհարիր լեզու, չարաշահվում է գրավոր լեզվում՝ ինչն աստիճանաբար հեռացնում է հայերենն իր արմատներից: Հեղինակն ամենևին չի թերազնահատում աշ-

հարարի կանոնարկմանը վերաբերող իր մի քանի աշխատություններով նա չափազանց կարևոր դեր է ունեցել աշխարհաբարի մշակման գործում. այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Հ. Իրիցյան**, նշվ. աշխ., էջ 383-409 և **Նույնի**, Գաբրիել Այվազյանի «Բառագնություն աշխարհիկ լեզուի» ձեռագիր երկը՝ որպես աշխարհաբարի տարածմանը նպաստող աշխատություն, «Բանբեր Մատենադարանի», հ. 27, Եր., 2019, էջ 371-387:

¹⁰ Նկատի ունի նշված հեղինակների հետևյալ աշխատությունները **Գ. Փեշումալձեան**, Քերականութիւն հայկազեան լեզուի, 3 հատորով, Կ. Պոլիս (համապատասխանաբար՝ 1829, 1835, 1845), վերջինիս գրչին են պատկանում նաև «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր աշխատությունը, Կ. Պոլիս, 1844, 1846 և «Քերական լեզուագիտութեան» առավել կրթական նպատակ հետապնդող աշխատությունը, Կ. Պոլիս, 1827), **Հ. Վանանդեցի** (Միրզայեան), Արփիական Հայաստանի, Կ. Պոլիս, 1836, **Նույնի**, Կերակուր քահանայից, Էջմիածին, 1841, **Նույնի**, Ոսկի դար Հայաստանի, Զմիւռնիա, 1841, **Մ. Սալլանթեան**, Քերականութիւն գրաբար լեզուի, ի Մոսկով, 1827: Ժամանակի տպագրությունների (գրաբարով կամ գրաբարի վերաբերյալ) մասին առավել մանրամասն տե՛ս **Վ. Համբարձումյան**, Գրաբարի գործառնությունը ..., էջ 69-73:

¹¹ Այդ գործում նշանակալից է Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի դերը, որի կարգադրությամբ և անմիջական օժանդակությամբ էլ Գ. Այվազյանը ձեռնարկում է այս աշխատության հրատարակությունը: Աշխատությունը տպագրվել է «Խալիպեան» ուսումնարանի վերատեսուչ Սարգիս Տիգրանյանի մեկենասությամբ:

խարհաբարի՝ «ռամկական բարբառի» դերը՝ նշելով, որ այն ուղղակի բավականաչափ մշակված չէ գրավոր խոսքի մեջ գործածվելու համար: Ըստ Գ. Այվազյանի՝ այն դեռևս պետք է գործածել միայն բանավոր խոսքում, ինչու չէ, նաև որպես «հայկազնեան լեզուն» մանուկներին բացատրելու միջոց, մինչև որ վերջինս կդառնա մշակված և հստակ լեզու, որն իր կանոնավորությամբ գրավոր լեզվին պատշաճ տեսք ու բովանդակություն կհաղորդի:

Գ. Այվազյանը «հայկազնեան լեզու» ասելով հասկանում է չմշակված աշխարհաբարը՝ դեռևս գրաբարյան բազմաթիվ կառույցներով և տարրերով: Նա չի գերազնահատում նաև գրաբարի դերը՝ նշելով, որ լեզվի մեջ պետք է չափավորություն լինի, և հեղինակները պետք է գերծմնան նաև գրաբարյան խրթնաբանություններից. «... եւ մի՛ դարձեալ ի հակառակէն զգրոցն բարբառ ընդ մեռեալս գրելով եւ նեխահոտ իմն համբաւելով գարշեցուցանեմք զմերազնեայն ի նմանէ եւ ի վարժից նորին» (էջ 22): Այլ կերպ ասած, Գ. Այվազյանի դիրքորոշումը լեզվի զարգացման վերաբերյալ, հետևյալն է՝ վերցնել աշխարհիկ լեզուն և, կանոնավորելով և հարստացնելով գրաբարի հարուստ գանձարանից, դարձնել նաև գրավոր լեզու: Այս իմաստով նա հարում է արևելահայերենի կազմավորման գործում մեծ ներդրում ունեցած Մ. Նալբանդյանի և Մտ. Նազարյանցի տեսակետներին¹²: Գ. Այվազյանը գտնում է, որ «աշխարհիկ լեզուի» նման զարգացումը միանգամայն հնարավոր է՝ օրինակ բերելով աշխարհաբարի արդեն ամուր հիմքերը արևելահայերենում: Նա հորդորում է ժամանակի հայերենագետներին մշակել «ռամկական բարբառը» և այն հստակեցնելով ու հարստացնելով դարձնել գրավոր խոսքին պատշաճ լեզու. «... ապա ուրեմն թող ժրասցին քաջագօտի մշակքն այգւոյ հայկական լեզուիս եւ դպրութեան ի մշակել զգրոցն ճոխ եւ ազնիւ հայկաբանութիւն, եւ միանգամայն ի յղկել զաշխարհիկն եւ ի մերձեցուցանել զայն տակաւ ի յստակութիւն բնիկ հայերենին, որ գրոցն է» (էջ 23):

Հայերենի զարգացումը ճիշտ ուղու վրա դնելու երկրորդ կարևոր նկատառումը, ըստ Գ. Այվազյանի, գերծմնալն է օտարաբանություններից, տվյալ դեպքում՝ ռուսաբանություններից: Նա կոչ է անում հեղինակներին հստակեցնել իրենց շարադրանքը՝ գործածելով հայերեն բառեր և շարահյուսական կառույցներ:

Գ. Այվազյանը հենց այդ խնդրի կարևորությունը հաշվի առնելով էլ որոշում է կազմել բառացանկ¹³՝ հիմնականում օգտվելով ժամանակի

¹² Վերջիններս նույնպես իրենց գործունեությամբ և հրատարակություններով նախապատվությունը տալիս էին աշխարհաբարին՝ նշելով, որ ժամանակն է անդրադառնալ աշխարհաբար կանոնավորելու հարցին արևելահայ իրականության մեջ (տե՛ս Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 367-379):

¹³ Գ. Այվազյանի ձևակերպմամբ՝ «բառարան մի ռուսերէն և հայերէն», որն աշխատության մեջ առանձնացված է «Տուցակ օտարոտի բառից ինչ եւ բանից որ յաճախագոյնս վարին ի շարագրածս ոմանց ի հայոց Ռուսաստանեայց» վերնագրով: Բառահոդ-

գրավոր խոսքից՝ որպես ուղեցույց իր ժամանակի հեղինակներին. «պատճառս տացուք ազգայնոցն Բանասիրաց ուղղելոյ եւ զայլս ի նոյն-պիսեաց վնասակար խառնախօսութեանց» (էջ 24): Այստեղ հարկ է նշել, որ հեղինակն առաջնորդվում է ժամանակի թելադրանքով՝ հաճախ օտարաբան կառույց համարելով այնպիսի բառային միավորներ, որոնք բարձր հաճախականությամբ գործածվում են ժամանակակից հայերենի բառապաշարում: Այդ իսկ պատճառով նրա կազմած բառացանկը այստեղ կներկայացնենք երկու մասով՝ 1. բառային միավորներ, որոնք իսկապես լեզվական շեղումներ են և ժամանակակից հայերենում ունեն իրենց համարժեք բառային տարբերակները, և 2. բառային միավորներ, որոնք լեզվական շեղումներ են ըստ Գ. Այվազյանի, մինչդեռ ժամանակակից հայերենի բառապաշարի լիարժեք մաս են:

1. Բառային միավորներ, որոնք իսկապես լեզվական շեղումներ են, հայերենում ունեն իրենց համարժեք բառային տարբերակները և համարվում են օտարաբանություններ կամ ոչ նախընտրելի բառեր:

Ադիուտանտ (էջ 24): Նախ՝ Գ. Այվազյանը հակիրճ ներկայացնում է բառի ծագումը, լատիներեն *adjuvans*, անցել է գերմաներենին՝ *adjutant* ձևով, անփոփոխ տարբերակով էլ մտել ռուսերենի բառապաշարի մեջ՝ *адъютантъ*, որից էլ հայերենում թարգմանության ժամանակ տառադարձությամբ դարձել է **ադիուտանտ**: Հեղինակի կարծիքով, նախ և առաջ իմաստային թարգմանությունն պետք էր անել. նշանակում է **օգնական սպարապետի**, այստեղից էլ առաջարկում է թարգմանել **համհարզ**, նաև այլ կապակցությունների մեջ՝ **օժանդակ**: Բառը հստակ ռուսաբանություն է, որը հայերենում ունի իր համարժեքը՝ **համհարզ**¹⁴:

Բոլորագրություն (էջ 35): Գ. Այվազյանն այս բառը համարում է ռամկախոս գրագիրների կողմից հորինված՝ հայերենին ոչ բնորոշ բառ, որ նշանակում է **ամբողջական գրություն, անթերի գրված, ամբողջական պատճեն**¹⁵:

Դառնալ (էջ 36): Հեղինակն այս եզրը համարելով ռուսերենի *обратиться* բառի խորթ թարգմանություն՝ հետևյալ կապակցությունների մեջ՝ **դառնալ առ տեղական իշխանությունն, դառնալ առ կուսակալն**, ա-

վածները այբբենական կարգով են. նախ տրվում է բառը, այնուհետև բառի՝ մայր լեզվում ունեցած տարբերակը և վերջինիս անցած ամբողջ ճանապարհը, ըստ այդմ էլ բազմաթիվ են ոչ միայն ուղղակի, այլև միջնորդավորված փոխառությունների տարբերակները, որից հետո Գ. Այվազյանը տալիս է իր կարծիքով հայերեն ավելի նախընտրելի բառային տարբերակները:

¹⁴ Տե՛ս **Ա. Ղարիբջան**, Ռուս-հայերեն բառարան, Եր., 1977, էջ 6: Սկզբնապես **համհարզ** նշանակել է կովի ժամանակ միասին **կովող, օգնական, նիզակակից**, սակայն հետագայում տեղի է ունեցել բառի իմաստային ընդլայնում՝ նշանակելով զինվորական պետի տրամադրության տակ գտնվող սպա պաշտոնական հանձնարարություններ և շտաբային գործեր կատարելու համար, այս իմաստով էլ լայնորեն կիրառվել է դրիմահայերի բառապաշարի մեջ:

¹⁵ Չպետք է շփոթել **բոլորագիր** (*բոլորգիր*) եզրի հետ, որ մեր գրատեսակներից մեկն է՝ վկայված 12-րդ դարից (տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հայ գրի և գրչության պատմություն, Եր., 1959, էջ 96):

ռաջարկում է փոխարինել **դիմել, գրել, ազդ առնել** տարբերակներով¹⁶:

Այսպես, Գ. Այվազյանը լեզվական շեղումներ է համարում նաև հետևյալ բառերը.

Թելագրություն (էջ 36): Հունական փոխառություն է՝ **թելէկրաֆիա**, որից անցել է ռուսերենին՝ **телеграфъ, телеграмма**, մինչդեռ, ըստ հեղինակի, հունարեն **τελη** (թելի) ոչ թե **թել** է նշանակում, այլ **հեռի**, որից էլ պետք է հայերեն փոխադրել **հեռագրութիւն** և **հեռագիր** տարբերակները:

Ժառանգավորաց դպրոց (էջ 37): Նշելով, որ այն գործածում են որպես էվրոպական **seminarium** և ռուսերեն **семинарія**¹⁷ բառերի հայերեն համարժեք, որով անվանում են եկեղեցական ուսումնարանները՝ Գ. Այվազյանն առաջարկում է **դպրանոցք** կամ **դպրելանք** տարբերակները:

Ի (էջ 38): Հեղինակը լեզվական շեղում է համարում **ի** նախդրի՝ ամսաթվերի հետ բացառական հոլովով գործածությունը՝ որպես ռուսերենից սխալ բառապատճենում. **ի 20-էն մայիսի (отъ 20-го мая)**:

Կոնսիստորիա (էջ 44): Գ. Այվազյանը, նշելով, որ վերջինս ծագել է լատիներեն **consistorium** բառից, առաջարկում է դրա փոխարեն գործածել **առաջնորդական ատեան** հայերեն համարժեքը:

Հետևումն (էջ 45): Թարգմանություն է ռուսերեն **вслѣдствіе** բառից, և **հետևումն որոյ (вслѣдствіе чего)** բառակապակցությունը հեղինակը խորթ է համարում հայերենին՝ առաջարկելով **վասն որոյ, վասն այսորիկ, սմին իրի, այնր աղագաւ, յաղագս այսր ամենայնի** գրաբարյան կառույցները:

Յիշեալ (էջ 46): Գ. Այվազյանը, անհաջող թարգմանություն համարելով տաճկերենի **մէզքիւր** և ռուսերենի **упомянутый** բառերից, առաջարկում է գործածել **նա, այն** դերանունները և վերջիններիս հոլովված ձևերը:

Նախանդամ (էջ 46): Հետաքրքիր է հեղինակի՝ այս բառի բացատրությունը. վերջինս նշում է, որ **նախ** բառը մեր լեզվում հիմնականում ժամանակային իմաստ ունի՝ **նախամարդ, նախահայր, նախավկայ**, և ոչ կարգային հաջորդականություն, ուստի **նախանդամ** (որպես **առաջին անդամ**) բառը խորթ է հայերենին, և առաջարկում է պարզապես ասել **առաջին անդամ (այսինչ վիճակի)**:

Շնչադրամ (էջ 49): Գ. Այվազյանն այս բառի գործածությունը գլխահարկ բառի իմաստով անհաջող է համարում՝ նշելով, որ եթե ռուսերենում այն նշանակում է միայն մարդկանց վերաբերող գլխահարկ (**душа, подушная**), ապա հայերենում **շունչ**-ը վերաբերում է և՛ մարդկանց, և՛ կենդանիներին, ուստի իմաստային շփոթ կարող է առաջանալ և նշանակել նաև կենդանիների մեկ շնչից ստացվող հարկ:

¹⁶ Դառնալ բառի նմանօրինակ գործածություն բազմիցս հանդիպում ենք մեր էպոսում՝ «Դառնամ, ողորմի տամ Դեղծուն ծամին» և այլն. ունի *շրջվել, ուղղվել, անդրադարձնալ, դիմել* իմաստները:

¹⁷ Ռուսերենի գրության ձևերը պահպանված են:

Բառացանկի այս բառերի մեծ մասը, ինչպես տեսնում ենք, իրենց իմաստով արդեն հնաբանություններ են, և դրանց նույնիսկ հայերենի համար ընդունված համարժեքը ժամանակակից հայերենի բառապաշարից աստիճանաբար դուրս է մնացել՝ երևույթների և հասկացությունների վերացմանը զուգընթաց: Որոշ բառային միավորներ, ընդհակառակը, այսօր լայն շրջանառություն ունեն: Ուստի Գ. Այվազյանի՝ հիմնականում ճիշտ դիտարկումները լեզվական խոտորումների վերաբերյալ միանգամայն տեղին էին ոչ միայն գրավոր խոսքի ճշգրտման հարցում, այլև իրենց տեղն ու դերն ունեցան աշխարհաբարի, իսկ ավելի ուշ՝ ժամանակակից հայերենի կանոնարկման գործում:

2. Առանձին խումբ են այն բառային միավորները, որոնք լեզվական շեղումներ են ըստ Գ. Այվազյանի, մինչդեռ վերջիններս ժամանակակից հայերենի բառապաշարի մաս են կազմում: Նկատի ունենք հետևյալ բառերը.

Այլադասան (էջ 26): Բառի հոմանիշները, ինչպիսին են՝ *այլադեն, այլակրոն, այլահալատ*, ըստ Գ. Այվազյանի հայերենում գործածվում են որպես *ուղղափառ, ուղղադասան, ուղղահալատ* բառերի հականիշներ: Այն ռուսերենի *иновѣрецъ* բառի պատճենումն է: Հեղինակը խորթ է համարում *այլադասան* ձևը՝ առաջարկելով այն փոխարինել *օտար դասանություն* տարբերակով, սակայն ժամանակակից հայերենում *այլադասան* տարբերակը միանգամայն ընդունելի և ճիշտ ձև է:

Առարկա (էջ 27): Բառի ծագումը կրկին գալիս է լատիներենից՝ *objectum*, որ անցել է ֆրանսերենին՝ *objet*, այնուհետև ռուսերենին՝ *предметъ* ձևով: Գ. Այվազյանը, Դավիթ Անհաղթի թարգմանությունների մեջ որոշ չափով տեղին համարելով բառի գործածությունը, միանգամայն խորթ և անհարիր է համարում այն իր ժամանակի հայերենին՝ առաջարկելով *նյութ* եզրը, օրինակ՝ *առարկայք ուսման*-ի փոխարեն՝ *նիւթք ուսման*, մինչդեռ ժամանակակից հայերենում *առարկա* եզրը ունի լայն կիրառություն և տարբերվում է *նյութ (բովանդակություն)* բառային միավորից:

Արքեպիսկոպոս (էջ 31): Ծագել է հունարեն *αρχιεπίσκοπος* (արխիեպիսկոպոս) բառից, որ նշանակում է *եպիսկոպոսապետ, առաջ եպիսկոպոս*. այն հայերենում պատճենվել է *արքիեպիսկոպոս* ձևով: Գ. Այվազյանն անտեղի է համարում *արքեպիսկոպոս*-ի առանձին՝ *արք եպիսկոպոս* գրությունը, ինչպես, ըստ նրա, գրությամբ միասին է գրվում *արքերեց (առաջ երեց)* բառը, սակայն առաջարկում է *արք*-ի փոխարեն գրել *արհի* և դնել բառից անջատ՝ *արհի եպիսկոպոս*: Այսօր արքեպիսկոպոս բառը լայնորեն գործածվում է:

Արտագրել (էջ 32): Գ. Այվազյանի կարծիքով՝ այս բառը ռուսերենի *спи сызвать* բառի աղավաղված տարբերակն է, ուստի և հայերենի համար նախընտրում է կիրառել *ընդօրինակել, օրինակել, գաղափարել, առնուլ զհաւասարն, փոխագրել* ձևերը: Ժամանակակից հայերենում

արտագրել բառն ունի գործածության լայն հաճախականություն և կիրառվում է վերը նշված բոլոր բառերի փոխարեն¹⁸:

Բարեկարգ (էջ 33): Բառի ծագումը Գ. Այվազյանը կրկին կապում է ռուսերենի հետ՝ **благочи́ный**, նշելով, որ այդպես քահանաները սովորություն ունեն անվանելու գյուղերի և քաղաքների վիճակը, սակայն նախապատվությունը տալիս է **կանոնաւոր, բարիոր կարգաւորեալ** տարբերակներին՝ ռուսերեն **благоустроены́й** բառի համարանությամբ: **Բարեկարգ**-ից ածանցված **բարեկարգիչ** եզրը հեղինակը նույնպես արհեստական է համարում՝ նշելով, որ մեր լեզվում չունենք համապատասխան վկայություն: Մինչդեռ ժամանակակից հայերենում **բարեկարգ** եզրը կրկին լայն կիրառություն ունի՝ բառակազմորեն ներկայացնելով ամփոփ և հստակ կապակցություն:

Գանձանակադրամ (էջ 35): Հեղինակն այս բառը համարելով ավելորդ կերպով բարդված՝ առաջարկում է գործածել պարզապես **գանձանակ** և անհրաժեշտության դեպքում կիրառել **դրամ ի գանձանակէ** կապակցությունը, մինչդեռ եկեղեցական եզրաբանության մեջ այն այսօր կիրառվում է:

Գ. Այվազյանը լեզվական շեղումներ է համարում նաև հետևյալ բառերը.

Աթոռապատկան (էջ 25): Երկարաշունչ բառ համարելով՝ առաջարկում է **աթոռային, առաջնորդական, վանական** ձևերը:

Ենթարկել (էջ 36): Համարում է «հելլենախոս» թարգմանիչների նորամուծություն և առաջարկում՝ **ներքոյ արկանել, առաջի առնել, մատուցանել** ձևերը:

Թեմակալ (էջ 37): Կրկին հունարեն ծագման բառ համարելով՝ նախապատվությունը տալիս է **վիճակավոր առաջնորդ, առաջնորդ վիճակի** տարբերակներին:

Իսկական (էջ 38): Այս բառն անհաջող թարգմանություն է դիտարկում ռուսերենից **подлинный, подлинникъ**, և առաջարկում է **ընդ իսկականին համեմատ է** կապակցությունը փոխարինել **համեմատ է բնագրին կամ սկզբնագրին**:

Լուսավորչական (էջ 39): Առաջարկում է պարզապես անվանել **Եկեղեցի հայոց** կամ **Հայաստանեայց եկեղեցի**:

¹⁸ Սակայն պետք է նշել, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» շարքի (դեռևս հրատարակված են Ա-Թ հատորները) նկարագրությունների ժամանակ *արտագրել* եզրի փոխարեն նախապատվությունը տրվում է *ընդօրինակել* ձևին (տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, խմբ. Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Եր., 1984, հ. Բ, խմբ. Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, Եր., 2004, հ. Գ, խմբ. Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ Հայրապետեանի, Եր., 2007, հ. Դ, խմբ. Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ Հայրապետեանի, Եր., 2008, հ. Ե, խմբ. Յ. Քեօսէանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ Հայրապետեանի, Եր., 2009, հ. Զ-Թ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Եր., 2012 (Զ, Է), 2013 (Ը), 2017 (Թ)):

Խաչակիր (էջ 42): Գ. Այվազյանը նշում է, որ այն սկզբնապես վերաբերել է Քրիստոսին՝ որպես խաչը կրող-տանող, ավելի ուշ՝ Երուսաղեմն այլազգիներից ազատագրող քրիստոնյաներին, որոնք խաչ էին կրում իրենց հանդերձներին, իսկ այժմ գործածվում է պարզապես խաչ կրելու իմաստով, վերջինիս փոխարեն նա առաջարկում է գործածել **խաչագարդ** բառը: Ժամանակակից հայերենում **խաչակիր**-ը գործածվում է երկրորդ իմաստով՝ **խաչակիրների արշավանք** և այլն:

Ծայրագոյն (էջ 42): Այս բառն անհաջող է համարում, քանի որ վերջինս ավելի իրերի հետ է կապվում, քան անձանց, և **ծայրագոյն վարդապետ**՝ որպես **առաջին վարդապետ**, բնորոշումը համարում խոցելի:

Կառավարիչ (էջ 43): Կրկին անհաջող բառ համարելով՝ Գ. Այվազյանը նշում է, որ այն առաջին իմաստով նշանակում է **վարել զկառու, կառոք զնալ**, և առաջարկում գործածել **ունել զտեսչութիւն, տնտեսել, վարել, ուղղել** տարբերակները:

Հաղորդագրութիւն (էջ 45): Համարելով անհաջող թարգմանությունն ուսերեն **отношение** բառից՝ առաջարկում է **տեղեկագիր, ծանուցագիր** տարբերակները, մինչդեռ այսօր վերջինս գործածվում է բարձր հաճախականությամբ, որով անվանվում է հիմնականում էլեկտրոնային նամակագրությունը:

Համաձայն (էջ 45): Գ. Այվազյանը նշում է, որ այն ռուսերենի **согласно** բառի անհաջող թարգմանությունն է և փոխարենը առաջարկում է գործածել **ըստ** բառը՝ **ըստ օրինաց՝ համաձայն օրինաց**-ի փոխարեն:

Նախարար (էջ 47): Այս բառի առիթով հեղինակը սխալմամբ նշում է, որ այն բնիկ հայկական բառ է¹⁹, նշանակում է **իշխան, ցեղապետ** կամ **տոհմով ազնուական**, և այս բառի՝ որպես ռուսերենի **министръ** և լատիներենի **minister** - **պաշտոնյա** իմաստով թարգմանությունը համարում ոչ նախընտրելի՝ առաջարկելով այն փոխարինել **նստիկան** տարբերակով (ըստ այդմ էլ՝ **նստիկանութիւն** - ռուս. **министерство**, ֆր. **ministère**): Մինչդեռ այսօր **նախարար** եզրը առաջին իմաստով նշանակում է հենց **պաշտոնյա**, իսկ **նստիկանը** միանգամայն այլ գործառույթ իրականացնող անձ է:

Փոխարինաբար (էջ 50): Կրկին անհաջող թարգմանություն համարելով ռուսերենի **заимобразно** բառից՝ առաջարկում է գործածել **իբրև զփոխ, իբրև ի փոխ, փոխոյ օրինակաւ, փոխառութեամբ, փոխաստուութեամբ** ձևերը և այլն:

Այս բառերը, ինչպես նշեցինք վերևում, լեզվական շեղումներ են միայն ըստ Գ. Այվազյանի, մինչդեռ վերջիններս կարողացան դիմանալ ժամանակի փորձությանը և այսօր հայերենի բառապաշարի լիիրավ անդամ են:

¹⁹ Մինչդեռ **նախարար** բառը իրանական փոխառություն է (տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 560):

3. Գ. Այվազյանը հատուկ ուշադրություն է դարձնում նաև քաղաքական, զինվորական և ծովային աստիճան-տիտղոսներին, քանի որ տվյալ ժամանակաշրջանում ավելի գործածական էին ռուսերեն տարբերակները, որոնք առանց թարգմանվելու, միայն հայերեն տառադարձությամբ էին շրջանառվում: Այսպես, **կանցլեր**, **դեյստվիտելնի տայնի սովետնիկ**²⁰, **գուբերնսկի սեկրետար**, **պրովինցիալնի սեկրետար**, **գեներալ ֆելդմարշալ**, **պոլկովնիկ**, **պոդպոլկովնիկ**, **մայոր**, **կապիտան**, **պրապորշչիկ**, **ադմիրալ**, **միչման** բառերը նա առաջարկում է թարգմանել հետևյալ հայերեն համարժեքներով՝ **канцлер** - **ատենադպիր արքայի**, **մեծ քարտուղար**, **дѣйствительный тайный совѣтникъ** - **ներգործական ներքին խորհրդական**, **губернскій секретарь** - **նահանգական քարտուղար**, **провинціальный секретарь** - **գավառական քարտուղար**, **генераль** - **фельдмаршалъ** - **մեծ սպարապետ**, **полковникъ** - **գնդապետ**, **подполковникъ** - **փոխանորդ գնդապետի**, **майоръ** - **զորավար**, **капитанъ** - **հազարապետ**, **прапорщикъ** - **յինապետ**, **адмиралъ** - **ծովակալ**, **мичманъ** - **նաւաստիք** (էջ 28-31)²¹: Հեղինակի առաջարկած հայերեն համարժեքներից հետագայում ոչ բոլորը լայն գործածություն ունեցան. մեծ մասն արդեն հնարանություն է, իսկ մի քանիսը չդիմացան ժամանակի փորձությունը, և այժմ նախապատվությունը կրկին տրվում է տառադարձված ձևերին, օրինակ՝ **մայոր**, **կապիտան** և այլն:

4. Գ. Այվազյանն առանձին բաժին է հատկացնում նաև երկարաշունչ և խրթին բառերին (որպես նոր ու անհաջող կազմություններ), որոնք ծանրացնում են մեր բառապաշարը իրենց «անհետքա ծանրութեամբ եւ երկայնաձիգ կազմակերպութեամբ» (էջ 55): Նա այդպիսի բառեր է համարում **ջրացամաքային**, **հսկայամարմին**, **անձնագույություն**, **վարքագրություն**, **բարելաւացուցանել**, **բանաստեղծականապես**, **փառակեցություն**, **խցանափայտ**, **կերակրափող**, **կրծափոս**, **ռոնաթաթ**, **լեզուաշինություն**, **երկաթալար**, **սառցակեղեւ**, **ծայրակէտ**, **ամենատաղանդավոր**, **առողջապահական**, **համալսարանական** և այլ բարդությունները (էջ 55-57): Մինչդեռ թվարկված բառերի մեծ մասը ևս հասել է մինչև մեր օրերը:

²⁰ Այս և մյուս բառերի ուղղագրությունը բնագրային է:

²¹ Հմմտ. **Ա. Ղարիբջան**, Ռուս-հայերեն բառարան: Նշված ռուսերեն տարբերակներն այստեղ թարգմանված են հետևյալ կերպ՝ **канцлер** – **կանցլեր**, **վարչապետ** (էջ 362), **действительный тайный советник** – **իրական**, **փաստական**, **իսկական** (էջ 196), **гвардіан** (էջ 1211) **խորհրդական** (էջ 1139), **губернскій секретарь** – **նահանգական**, **նահանգային** (էջ 185) **քարտուղար** (էջ 161), **провинціальный секретарь** – **գավառական** (էջ 925) **քարտուղար** (էջ 161), **генерал** - **фельдмаршал** – **գեներալ**, **զորավար** (էջ 161), **ֆելդմարշալ** (էջ 1316), **полковник** – **գնդապետ** (էջ 835), **подполковник** – **փոխգնդապետ** (էջ 809), **майор** – **մայոր** (էջ 455), **капитан** – **կապիտան**, **նավապետ**, **գլխապետ** (**սպա**), **պետ**, **դեկավար** (էջ 363), **прапорщик** – **վառաստար**, **պրապորշչիկ** (**ցարական բանակի ցածրաստիճան սպա** (էջ 879), **адмирал** – **ծովակալ**, **ադմիրալ** (էջ 6), **мичман** – **ծով. միչման** (**սպայական կոչում կամ աստիճան և այդ կոչումը կամ աստիճանն ունեցող անձ**, (էջ 484):

Բառային միավորներից գատ՝ Գ. Այվազյանն անդրադառնում է նաև շարահյուսական կառույցների հայեցի գործածման կարևորությանը՝ երբեմն նախապատվությունը տալով գրաբարյան շարահաստությանը: Այսպես, **Հայկական պատմություն, ծովային ջուր, վիճակաւոր առաջնորդ, ռուսական գրականություն** կապակցությունները համարում է խոցելի և առաջարկում գործածել գրաբարյան կառույցները՝ **պատմություն Հայոց, ջուր ծովու, առաջնորդ վիճակի, գրականություն Ռուսաց** և այլն (էջ 28-31):

5. Նշված աշխատության մեջ Գ. Այվազյանը չի շրջանցում նաև կետադրության կանոնարկման հարցը, կետադրական բազմաթիվ շեղումների առկայությունը, ինչպես նաև զանազան եվրոպական նշանների գերակշռության խնդիրը գրավոր խոսքում: Հեղինակը ցավով է նշում, որ բառային մակարդակից գատ, իր ժամանակի հեղինակները եվրոպական լեզուներից՝ հիմնականում ռուսերենի միջնորդությամբ հաճախ անհարկի պատճենումներ են կատարում նաև կետադրության ոլորտում. «... նովին ցաւալի հիւրընկալութեամբ, զի մի՛ ասացից, թէ ամօթալի մուրդութեամբ, սկսանին արդ ի կիր արկանել եւ նշանագիրս իմն եւ կետադրութիւնս եւ համառօտագրութիւնս սեպհականս եւրոպական լեզուաց» (էջ 60):

Գ. Այվազյանը նախ անդրադառնում է հռոմեական թվանշանների՝ իր կարծիքով անհարկի գործածություններին՝ նախապատվությունը տալով թվերի՝ հայերեն այբուբենի տառային համարժեքներին, ինչպես **I, II, III, IV, VIII, MDCCCLXVIII**²² և այլ թվանշանների փոխարեն հայերեն այբուբենի ավելի մատչելի տարբերակներին՝ **Ա, Բ, Գ, Դ, Ը, ՌՊԿԸ**: Այնուհետև բերում է մի քանի կետադրական նշանների օրինակներ, ինչպիսիք են՝ «;», «?», «!» և այլն, նշելով, որ հայերենն ունի դրանց համարժեքները՝ ստորակետ՝ «», բութ՝ « », հարցական նշան՝ « » (Գ. Այվազյանի նախընտրած տերմինաբանությամբ՝ «*ոլորակ*»), բացականչական նշան՝ « » (Գ. Այվազյանի նախընտրած տերմինաբանությամբ՝ «*երկար*»)²³: Վերջակետի նշանի՝ «:»-ի փոխարեն առաջարկում է միջակետ՝ «.» (ամենայն հավանականությամբ խոսքը նախադասության ավարտից հետո դրվող վերջակետի մասին չէ, այլ այդ նշանի անհարկի գործածության, երբ այն դրվում է նախադասության մեջտեղում՝ «իրար

²² M (1000) DCCC (800) LX (60) VIII (8), հռոմեական թվանշանների այլ օրինակներ՝ XL (40), L (50), C (100), CD (400), D (500), DC (600) և այլն: Հիշենք, որ ժամանակակից հայերենում և հռոմեական թվանշանները, և՛ հայերեն այբուբենի տառային համարժեքները նաև դասական թվականներ են առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, ութերորդ, հազար ութ հարյուր վաթսուութերորդ (արաբական թվանշաններով 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 1868-րդ). ավելի մանրամասն տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2004, էջ 159:

²³ *Ոլորակ* և *երկար* կետադրական տերմինների մասին ավելի մանրամասն տե՛ս **Վ. Համբարձումյան**, Հայոց լեզվի կետադրական տերմինների ծագումը և կառուցվածքը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2001, հ. 1, էջ 202-219:

մեկնաբանող բառերի և նախադասությունների միջև»²⁴ միջակետի փոխարեն), կարգային համար ցույց տվող նշանի՝ «№»-ի փոխարեն առաջարկում է կիրառել «Թ» տառը՝ որպես «թուահամար»-ի կրճատ տարբերակ: Գ. Այվազյանի կարծիքով, հայերենին անհարիր են նաև կրկնվող բառերի որոշ համառոտագրություններ, ինչպիսին են՝ «**հ. հ.** (հայրեր)», «**պ. պ.** (պարոնայք)», «**թ. թ.** (թվականներ)» և այլն: Մինչդեռ ժամանակակից հայերենում նշվածներից «թվականներ»-ի համառոտագրությունը լայն կիրառություն ունի հետևյալ տեսքով՝ «**թթ.**» (օր. 2018-2019 թթ.):

6. Խոսելով լեզվի զարտուղությունների մասին՝ Գ. Այվազյանը հպանցիկ անդրադառնում է նաև հնդկահայերի գործածած օտարաբանություններին, որոնք անցել են հիմնականում անգլերենից, ինչպես օր. «**էջէնթ** (գործակալ, անգլ. agent)», «**Մէի** (մայիս, անգլ. May)», «**Ջուն** (հունիս, անգլ. June)», «**Ջուլայ** (հուլիս, անգլ. July)» և այլն: Հեղինակը, այնուամենայնիվ, խնդիրն այնքան էլ խորքային չի համարում, քանի որ, ըստ նրա, հնդկահայերը առավել զգուշավոր են իրենց բառապաշարում նոր բառեր կիրառելիս: Վերջիններս խստորեն են վերաբերվում օտարաբանություններին՝ հիմնականում անաղարտ պահելով իրենց լեզուն, մինչդեռ ռուսահայերի և տաճկահայերի դեպքում այն հասել է ահռելի չափերի:

Գ. Այվազյանն իր «հարեւանցի քննադատութեանց խորհրդածութիւններ»-ից հետո որպես վերջաբան մեջբերում է Ա. Բագրատունու «Քերականութիւն»-ից ծավալուն մի հատված (էջ 61-63)²⁵, որտեղ հեղինակը (Ա. Բագրատունին – Ի. Հ.) կարևորում է հայերենի դերն ու տեղը յուրաքանչյուր հայի համար ազգային ինքնությունը պահելու գործում, խրախուսում գրավոր խոսքում լեզվի անաղարտության պահպանումը, առավելապես թարգմանությունների ժամանակ օտարաբանություններից գերծ մնալը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ Գ. Այվազյանի այս աշխատությունը մեծ դեր և նշանակություն ունեցավ իր ժամանակի համար: Թեև հեղինակի առաջարկած ոչ բոլոր տարբերակները դիմացան ժամանակի փորձությանը, այնուամենայնիվ, մեծ է նրա ավանդը լեզուն հենց զարգացման փուլում մաքրելու հարցում:

Բանալի բառեր - *Գարրիել Այվազյան (Այվազովսկի), լեզվական շեղումներ, հունարան հայերեն, լատինարան հայերեն, գրարար, աշխարհարար*

АСМИК ИРИЦЯН – Проблемы языкового регулирования в работе Габриэла Айвазяна «Нарушения в арменистике...» – Статья посвящена книге Габриэла Айвазяна «Нарушения в арменистике в старые и новые времена», в которой

²⁴ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայերենի կետադրությունը, Եր., 2005, էջ 99:

²⁵ Տե՛ս Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 629-632

автор выявлял языковые ошибки, допускавшиеся его современниками, в надежде предотвратить их, а также привлечь внимание общественности к утверждению норм и правил армянского правописания. Речь, в частности, шла об отклонениях от духа языка, об искусственных новообразованиях, возникавших в переводной литературе под влиянием классических языков – греческого и латыни.

Книга Айвазяна, написанная на грабаре XIX века, сыграла свою роль; она не только показала, как развивается литературный язык, но и продемонстрировала разного рода нарушения, допускавшиеся авторами начиная с «золотого века».

Ключевые слова: *Габриэл Айвазян (Айвазовский), языковые отклонения, эллинизированный армянский, латинизированный армянский, древнеармянский, современный армянский*

HASMIK IRITSYAN – *Problems of Language Regulation in the Work “Violations of Armenology” ... by Gabriel Ayvazian.* – This article is devoted to linguistic violations in the Armenian language, according to the book *Violations of Armenology in the Old and New Times* by Gabriel Ayvazian, in which an attempt was made to identify and prevent unnecessary linguistic applications in time, to draw public attention to various linguistic deviations, to artificial variants of words that are often found in translated literature under the influence of Greek and Latin languages.

This work, written in the old Armenian language *Grabar* of the 19th century, plays an important role in terms of introducing the correct development of the language; it not only shows the normal course of language development but also expands the time limits of language violations, starting from the Golden Age.

Key words: *Gabriel Ayvazyan (Ayvazovsky), language deviations, Hellenizing Armenian, Latinizing Armenian, Old Armenian, Modern Armenian*

Ներկայացվել է՝ 03.10.2019

Գրախոսվել է՝ 23.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020